

Պլուտինոսի համաձայն, բարոյական իմաստով «չար»ը (յուն․՝ “kakón”) ինքնին գոյ մը չէ, այլ միայն՝ «բարի»ի բացակայութիւնը: Իսկ «բարի»ի բացակայութիւնը երբեք բացարձակ չէ, որովհետեւ «բարի»ի ներգործութիւնը կը հասնի նոյնիսկ նիւթին: Այս իմաստով «չար»ը երբեք ինքնուրոյն զօրութիւն մը չի ներկայացնէր, այլ կարիքաւոր ու անզօր ոչնչութիւն մըն է, որ կը յաղթահարուի, երբ մեր յարատեւ ուշադրութիւնը «բարի»ին ուղղուած է:

Նորպլատոնական բարոյագիտութեան համաձայն՝ նիւթը (մատերիա) նոյնինքն *չարն* է: Ըստ Պլուտինոսի, մարդիկ պէտք է այդ *չարէն* «մաքրուելով»՝ նիւթական աշխարհը յաղթահարեն, հեռանան աշխարհիկ կարիքներէն եւ սպրին մտավերացմամբ (Meditation) ու ճգնաւորական (Ascetism) կեանքով: Միայն այս ձեւով կարելի է աստիճանաբար բարձրանալ ու միանալ Գերա-գոյն Բարիին՝ *Առաջնամիակին*: Աստուածային այս միացումը զուտ խորհրդապաշտական (միստիկ, Mystic) բնոյթ ունի. ան, թէեւ ժամանակաւոր, բայց կրկնելի է: Ով որ այս աստիճանին հասած է, ան կ'սպրի երջանիկ կեանք մը: Միայն այս տեսակէտով, ասինքն մարդու գերագոյն կենսասնպատակը, որ *Առաջնամիակին* կամ *Աստուծոյ* հետ միացումն է, կարելի է համադրել՝ Նոր-Պլատոնականութիւնն ու Քրիստոնէութիւնը:

Պլուտինոս մեծ կարեւորութիւն կու տար կամքի ազատութեան (Free Will), որովհետեւ ի բնութենէ մարդը ինքնորոշումներ կատարող (ինքնուրոյն) էակ մըն է: Պլուտինոսի համաձայն, կամքի ազատութիւնը երկու տարբերակներու միջեւ կամայականօրէն ընտրութիւնը չէ, այլեւ կամքի ազատութիւն կը կայանայ, երբ անհատը ինքնաբերաբար կը կատարէ այն, ինչ որ իր ինքնութիւնը կը ձգտի, առանց որեւէ որոշականութեան (Determinism): Նմանօրինակ ինքնաբուխ արարք մը ցոյց կու տայ, որ անհատը ինքնաբաւութեան (Autarky) տէր է եւ փոխանակ արդէն գոյութիւն ունեցող պատճառականութեան (Causality) մը ոլորտին մէջ մտնելու, ինք կը սկսի «պատճառ-հետեւանք»ի նոր շարք մը: Այս համոզումով Պլուտինոս կը հակաճամէ որոշականութեան եւ ճակատագրապաշտութեան (Fatalism) ուսմունքին, որոնք մարդկային վերաբերմունքն ու ճակատագիրը կ'ընկալեն, որպէս արտաքին ազդեցութիւններու հետեւանք: Պլուտինոս կը պայքարէր աստղագուշակութեան (Astrology) դէմ, որ մարդու նկարագրային յատկութիւնները եւ ճակատագիրը կը վերագրէին աստղերու ազդեցութեան, սահմանափակելով հոգիի ազատութիւնը: Ան կը բացառէր նաեւ կոյր պատահականութեան (Contingency) հնարաւորութիւնը, որովհետեւ աշխարհի մէջ կամայական ոչինչ կը պատահի եւ ամէն ինչ բարեկարգուած է:

Ի տարբերութիւն Պլատոնի ընկերային (Social) բարոյագիտութեան, Նոր-Պլատոնականութիւնը կը զարգացնէ առաւելաբար՝ անձնական կամ անհատական (Individual) բարոյագիտութիւն մը:

